

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2021թ. մարտի 2-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 32-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Սահմանադրական իրավունքի ամբիոն դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Այվազյանի ծննդյան 80-ամյա տարեդարձի հոբելյան:
2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայում պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):
3. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ նոր նախագահի թեկնածուի հաստատում:
4. Քննաշրջանի արդյունքների ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

#### 1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատում:

Խորհրդի նախագահ պրոֆ. Գ.Ղազինյանը իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անունից շնորհավորանքի ջերմ խոսքեր հայտնեց սահմանադրական իրավունքի ամբիոն դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Այվազյանին ծննդյան 80-րդ տարեդարձի կապակցությամբ:

ԵՊՀ ռեկտորի անունից շնորհավորանքով հանդես եկավ ԵՊՀ բնական և ճշգրիտ գիտությունների գծով պրոռեկտոր ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Ռ.Բարխուդարյանը՝ հանձնելով ԵՊՀ ոսկե հուշամեդալ և ԵՊՀ 100-ամյակի կապակցությամբ հատուկ պատրաստված և համապատասխան նշումով գորգ:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայում պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հ.Բեդկյան, ՀՀ արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր, իրավ. գիտ. թեկնածու Ա.Մանասյան, ՀՀ Սարդու իրավունքների պաշտպան, ի.գ.թ., դոցենտ Ա.Թաթոյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունելի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

**3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ նոր նախագահի և քարտուղարի ընտրության արդյունքների հաստատում:**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Լ.Թադևոսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ՈԻԳԸ նոր նախագահ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Գ.Բարսեղյանի և քարտուղար ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող Նունե Պողոսյանի ընտրության գործընթացի և արդյունքների վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Գաբուրյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ նոր նախագահի և քարտուղարի ընտրության արդյունքները:

**4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի 1-ին և 2-րդ լուծարքային շրջանների արդյունքների մասին:**

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տվյալներ ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի 1-ին և 2-րդ լուծարքային շրջանների արդյունքների մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումն ընդունելի գիտություն:

**5. Ընթացիկ հարցեր:**

**5.1 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նաիրա Արտաշեսյանի թեկնածուականատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նաիրա Արտաշեսյանի՝ «Հայցի ինստիտուտը վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուականատենախոսության թեման, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – «Դատական իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Ս.Մեղրյանին,

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Սյուզաննա Վարդանյանի թեկնածուականատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Սյուզաննա Վարդանյանի՝ «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերատառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – «Դատական իրավունք».

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Սեդա Ստեփանյանի՝ «Դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության տեսական և իրավական հիմքերը ՀՀ քրեական դատավարությունում» վերատառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – «Դատական իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանին,

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.4 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ Արցախի պետական համալսարանի՝ Իրավունքի ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Լուսինե Սուլեյմանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Արցախի պետական համալսարանի՝ Իրավունքի ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Լուսինե Սուլեյմանյանի՝ «Էլեկտրոնային ապացույցները քրեական դատավարությունում» վերատառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – «Դատական իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանին,

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.5 ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Համլետ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դոց. Վ. Այվազյանը, դոց. Ա. Մարգարյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հայցորդ Համլետ Հարությունյանի «Զորահավաքի սահմանադրաիրավական խնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, ԺԲ.00.02 /Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում/ մասնագիտությամբ:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Վ. Այվազյանին :

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.6 ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Տաթևիկ Սիրադեղյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դոց. Գ. Դանիելյանը, դոց. Վ. Այվազյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հայցորդ Տաթևիկ Սիրադեղյանի «Արդարադատության մատչելիության սկզբունքը վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, ԺԲ.00.02 /Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում/ մասնագիտությամբ:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Վ. Այվազյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.7 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Արցախի պետական համալսարանի՝ Իրավունքի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Մարգարիտա Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա. Գաբրուզյանը, պրոֆ. Գ. Դանիելյանը:  
**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Արցախի պետական համալսարանի՝ Իրավունքի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Մարգարիտա Մարգարյանի «Անչափահասների հանցավորության հիմնախնդիրները Արցախի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա. Քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարյանին:

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**5.8 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն. մաս 1» վերտառությամբ դասագիրքը (հեղ.՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ.Հովհաննիսյան, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հ.Բեդկյան, ի.գ.թ., ասիստենտ Ա.Ղարսյան, ի.գ.թ., ասիստենտ Տ.Խաչիկյան) տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն. մաս 1» վերտառությամբ դասագիրքը (հեղ.՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ.Հովհաննիսյան, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հ.Բեդկյան, ի.գ.թ., ասիստենտ Ա.Ղարսյան, ի.գ.թ., ասիստենտ Տ.Խաչիկյան) երաշխավորել տպագրության:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*





**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»  
ԾՐԱԳՐՈՎ 2020-2021թթ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

**Մագիստրոսական թեզերի պաշտպանություն:**

2021թ. փետրվարի 17-ին տեղի ունեցավ «Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք» ծրագրով մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

Պաշտպանության ներկայացվեց 10 մագիստրոսական թեզ, որոնցից 6 ուսանող ստացավ «գերազանց» գնահատական, 2 ուսանող «լավ» գնահատական, 2 ուսանող՝ «բավարար» գնահատական:

**Ընդհանուր բնույթի եզրահանգումներ:**

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն իրականացվել է հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի և պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի կողմից մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական հարաբերությունների կանոնակարգման տեսանկյունից ունեն առաջնահերթ նշանակություն: Մինևույն ժամանակ, առանձին դեպքերում ընտրվել են չափազանց ընդհանուր բնույթի և լայն թեմաներ, ինչից, կարծում եմ, հետագայում անհրաժեշտ է խուսափել:

Թեև աշխատանքներն ընդհանուր առմամբ աչքի էին ընկնում հեղինակների կողմից նյութի տիրապետման և ներկայացման աստիճանով, սակայն դրանց մի մասն ուներ սոսկ ճանաչողական, նկարագրական բնույթ, աշխատանքի շրջանակներում կատարված չէր գիտական հետազոտությունների մեթոդաբանությանը համապատասխան՝ անհրաժեշտ վերլուծություն: Կարծում եմ, որ նշված խնդիրը մեր կրթական համակարգի կարևորագույն հիմնախնդիրներից է, ունի հաղթահարման անհրաժեշտություն՝ առաջին հերթին գիտական աշխատանքներին ներկայացվող չափանիշների վերաիմաստավորման և աշխատանքների ներկայացման հմտությունների զարգացման տեսանկյունից: Այն պետք է անընդհատ գտնվի



ամբիոնների և ղեկավարների ուշադրության կենտրոնում: Առաջին հերթին վերջիններիս կողմից տարվող աշխատանքից է կախված նշված խնդրի հաղթահարման հնարավորությունների պատշաճ օգտագործումը:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ աշխատանքների մեծամասնությունում վերլուծված էր համարժեք գիտական գրականություն:

Թեզերի մեծամասնությունն իրականացված էր աշխատանքներին ներկայացվող ձևական պահանջների պահպանմամբ: Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ աշխատանքի՝ պահանջվող բովանդակային մասերի վերնագրերի առկայությունը չէ, որ վկայում է պահանջների պահպանվածության մասին: Անհրաժեշտ է համապատասխան մասերի բովանդակությունը շարադրել՝ դրանց ենթադրյալ համատեքստին համապատասխան: Օրինակ՝ աշխատանքի նպատակին և խնդիրներին առնչվող հատվածը չի կարող վերաբերել զուտ թեմայի նկարագրությանը, կամ թեմայի արդիականությանն առնչվող հատվածը պետք է ուղղված լինի հեղինակի կողմից թեմայի արդիականության հիմնավորումներին և ոչ այլ տեղեկատվության մատուցման:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ ժամանակակակից գիտությունն ընթանում է միջդիսցիպլինար հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Պատճառն այն է, որ առավել ճշգրիտ գիտական եզրահանգումները հնարավոր են սուկ երևույթների բոլոր ասպեկտների հետազոտության, վերլուծության և ամփոփման արդյունքում: Ակնհայտ է, որ սահմանադրաիրավական ինստիտուտների առնչությամբ եզրահանգումները ևս չեն կարող հավաստի և ամբողջական լինել սուկ իրավական հետազոտության արդյունքում և ենթադրում են նաև քաղաքական, հոգեբանական, սոցիոլոգիական և այլ ասպեկտների վերլուծություն: Կարծում եմ, որ եզրահանգումների հավաստիությունն ու ամբողջականությունը երաշխավորելու տեսանկյունից մագիստրոսական թեզերի շրջանակներում անհրաժեշտ է հենց նման միջդիսցիպլինար հետազոտության իրականացումն ու նաև քաղաքագիտության, քաղաքական հոգեբանության, սոցիոլոգիայի և այլ վերաբերելի գիտությունների շրջանակներում առկա տվյալների, մեթոդաբանության, կատարված եզրահանգումների վերլուծությունն ու ամփոփումը: Ուրախալին այն է, որ այս տարի ներկայացված մագիստրոսական թեզերից մի քանիսն աչքի էին ընկնում հենց նման մեթոդաբանության կիրառմամբ:

Աշխատանքների առնչությամբ ներկայացված գրախոսականների մեծամասնությունը ևս կատարված էին պատշաճ մակարդակով:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև ուսանողների մոտ վերլուծական մտածողության և նյութը ներկայացնելու հմտությունների զարգացմանը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունի կարծրատիպային և մեխանիկական մտածողության հաղթահարումը, ինչը երբեմն նկատելի է ուսանողների մոտ: Դասագրքում կամ ձեռքի տակ եղած իրավական ակտում ներկայացված գաղափարների մեխանիկական վերարտադրությունը չի կարող գիտելիքի գնահատման և գիտական հետազոտության իրականացման առանցքային

չափանիշ հանդիսանալ: Ավելին, դասագիրքն էլ ուսանողի կողմից չպետք է դիտարկվի որպես հիմնախնդրին ծանոթանալու միակ աղբյուր: Հետևաբար, գիտական հետազոտության իրականացման ու հետազայում դրա գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ոչ թե կարդացածի անգիր ու մեխանիկական վերարտադրությունը, այլ կատարված գիտական հետազոտության որակն ու այն ներկայացնելու հմտությունները:

**Պետական քննական հանձնաժողովի նախագահ,  
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,  
Ի.Գ.Թ., դոցենտ**

**Մանասյան**

*26.02.2021թ.*

**Ա.**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ՝  
 <<Քրեական իրավունք և դատավարություն>> և <<Կրիմինալոգիա>>  
 մագիստրոսական ծրագրերի  
 2020-2021 ուս.տարվա շրջանավարտների մագիստրոսական թեզերի  
 պաշտպանության արդյունքների վերաբերյալ**

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման <<Քրեական իրավունք և դատավարություն>>, ինչպես նաև <<Կրիմինալոգիա>> մագիստրոսական ծրագրերի 2020-21 ուս.տարվա ընդհանուր թվով 37 շրջանավարտների մագիստրոսական թեզերի ս/թ փետրվարի 17-18-ը կայացած պաշտպանությունների արդյունքները վկայում են ընդհանուր առմամբ շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին:

Մասնավորապես, ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող ցուցանիշներով:

ԱՌՎԱ	ուսանող	գերազ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
<b>Քրեական իրավունք</b>	13	9	4	-	—	—
<b>Քրեական դատավարություն</b>	15	10	5	-	—	—
<b>Կրիմինալոգիա</b>	9	6	3	-	—	—
<b>Ընդամենը</b>	<b>37</b>	25	12	-	-	-

Ներկայացված ցուցանիշներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից <<գերազանց>> գնահատական է ստացել 67,6%-ը, <<լավ>>՝ 32.4%-ը, իսկ <<բավարար>>՝ և <<անբավարար>> գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացածներ չեն արձանագրվել:

Ընդ որում, <<Քրեական իրավունք>>-ից մագ.թեզ պաշտպանած 13 շրջանավարտներից մեկ շրջանավարտ գնահատվել է <<20>>, չորսը՝ <<19>>, չորսը՝

«18», երեքը՝ «16», մեկը՝ «15», միավոր: Հետևաբար, տվյալ առարկայից *միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է 17,76 միավոր:*

«Քրեական դատավարություն» առարկայից մագ.թեզ պաշտպանած 15 շրջանավարտներից 4 շրջանավարտ գնահատվել է «20» միավոր, երեք շրջանավարտ գնահատվել է «19», երեքը՝ «18», մեկը՝ «17», երկուսը՝ «16», երկուսը՝ «15», միավոր: Հետևաբար, տվյալ առարկայից *միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է «18» միավոր:*

«Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրով ընդհանուր թվով 9 շրջանավարտներից երկու շրջանավարտ գնահատվել է «20» միավոր, երկու շրջանավարտ՝ «19» միավոր, երկուսը՝ «18» միավոր, երկուսը՝ «16» միավոր, մեկը՝ «15» միավոր: Նշված մասնագիտացման *միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է 17,8 միավոր:*

Անհրաժեշտ է նշել, որ կովիդի և պատերազմի հետևանքներով պայմանավորված՝ 2 մագիստրոսների աշխատանքների պաշտպանությունը տեղում կազմակերպվեց հեռավար, քանի որ ուսանողներից մեկը գտնվում էր Արցախում, մյուսը՝ Ջավախքում:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և շրջանավարտների կողմից բարեխիղճ աշխատանք է կատարվել ինչպես մագիստրոսական թեզերի պատրաստման, այնպես էլ հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու ուղղությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված աշխատանքներից մի քանիստում արտացոլված էին մագիստրանտների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա առաջ քաշված ինքնատիպ եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Բացի այդ, հատկապես բարձր գնահատականներ ստացած շրջանավարտները քաջատեղյակ էին ոչ միայն գործող օրենսդրական ակտերում առկա իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող վիճահարույց, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող խնդիրներից և շրջանառության մեջ դրված համապատասխան օրինագծերից:

Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական թեզերի գրեթե բոլոր հեղինակները տիրապետում էին նյութին և, որպես կանոն, կարողանում էին ոչ միայն առանց գրավոր տեքստի ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, այլև՝ հիմնականում սպառիչ պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների կողմից առաջադրված հարցերին:

Միննույն ժամանակ, թեզերի վերաբերյալ ինչպես գիտական ղեկավարների կարծիքները, այնպես էլ գրախոսականները լիովին համապատասխանում էին ներկայացվող պահանջներին: Այդ առումով, սակայն, որոշակի մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գրախոսականներում հաճախ նշված էին նաև տեխնիկական բնույթի թերություններն ու բացթողումները, ինչը պետք է անպայմանորեն հաշվի առնվի համապատասխան ամբիոնների և ղեկավարների աշխատանքները հետագայում կազմակերպելիս:

Աշխատանքների մեծ մասում զգացվում էր իրավակիրառ պրակտիկայի նյութերի և դրանց վերլուծության արդյունքների պակասը: Մագիստրանտները գլխավորապես օգտվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից: Ընդ որում, առավել հաճախ բավարարվել էին պարզապես դրանք վկայակոչելով կամ մեջբերելով: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին:

Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի մագիստրանտները հնարավորություն ունենան ծանոթանալու թեզի թեմային առնչվող պրակտիկ նյութերին: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, անելիք ունեն հատկապես գիտական ղեկավարները:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովին հաջողվեց ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառույթները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ թեզերի և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ կոնսենսուսի եղանակով և ի օգուտ շրջանավարտի: Ուշագրավ է, որ նրանցից յուրա-

քանչյուրի կողմից նշանակված գնահատականների միջև էական շեղումներ չկային:  
Հավանաբար, հենց դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ շրջանա-  
վարտների կողմից որևէ դժգոհություն (համենայն դեպս՝ նկատելի) չի եղել:

**Պետական քննական**

**հանձնաժողովի նախագահ**



**Ա.Թաթոյան**